ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Ռ.Հ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Անի քաղաքի կաթողիկե եկեղեցու շինարարական արձանագրությունը փորագրվել է հարավային ճակատի արևմտյան անկյունում: Ներկայացնենք արձանագրությունը.

«Ի Նծ (450) թ[ուին կամ թուականին] հայոց, Մ[իբ][1] (222) թ[ուին կամ թուականին]... հոռոմոց, ՅՂԳ (393) ամին գէբր[2], ի ժամանակս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Սարգիս հայոց կաթողիկոսի եւ ի մեծափառ թագաւորութեանն Գագկա[յ]. հայոց եւ վրաց շահանշահի, ես Կատրամիդէ հայոց թագուհի, դուստր Վասակա[յ] Սիւնեաց թագաւորի յողորմութիւնն աստուծոյ ապաւինեցա եւ հրամանաւ առն իմո[յ] Գագկա[յ] շահանշահի շինեցի զսուրբ կաթողիկէս, զոր էր հիմնադրեալ մեծին Սմպատա[յ] եւ կանգնեցաք տուն աստուծոյ նորոգ եւ կենդանի ծնունդ հոյգեւոր եւ արձան մշտնջենաւոր, զարդարեցի եւ զարդիւք պատուականաւք նուէրք ի Քրիստոս եւ զարմից իմ եւ որդոց՝ Սմպատա[յ], Աբասա[յ] եւ Աշոտո[յ]: Հրամայեալ եմ ես տէր Սարգիս սպասաւորաց եկեղեցոյս, յետ էլից բարէպաշտ թագուհոյս զվարդաւարին յիսնեակս միով քառասունիւ կատարել անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի: Եթէ ոք զարձանագրեալդ անփոյթ առնէ դատապարտեալ եղիցի ի Քրիստոսէ: Ի վեց ՌՆԼ եւ Գ(6433) ամացն Ադամա[յ], ի Ռ եւ ԲԺ (1012) ամի մարմնանալո[յ] աստուածն (կամ աստուածային)՝ բանի, ՉԺԱ[3] (711) ամի հաւատալո[յ] ի Քրիստոս հայոց: Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ Բենէ»[4]:

Անիի մայր տաճարի արձանագրությունը հրատարակել են Հ.Շահխաթունյանցը,[5] Ս.Ջալալյանցը, Ն.Սարգսյանը, Ղ.Ալիշանը, Մ.Գևորգյանցը, Կ.Բասմաջյանը, Հ.Օրբելին[6]: Արձանագրության համաժամանակյա տարեթվերին իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են Ղ.Ալիշանը, Ն.Մառը, Կ.Բասմաջյանը, Ն.Ակինյանը, Ալ.Աբրահամյանը, Ա.Մանուչարյանը, Ս.Ավագյանը և Պ.Մուրադյանը[7]:

---

[1] Բնագրում ՄԺԹ: Ուղղումը մերն է:

[2] Գրված է երեք փակագրերով, որոնց մեկնությունը կտրվի հոդվածում:

[3] Բնագրում ՉԸԺԱ: Ուսումնասիրողները կարդացել են ՉԸԺ, ՉԱԺ և ՉԺԱ:

[4] Հ.Օրբելի, Դիվան հայ վիմագրության, պր. 1, ե.,1966, էջ 35, լուսանկար, տախտակ XIII:

[5] Հ.Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատ-տայ, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 353-354, Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 5, Ն.Սարգսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 117-118, Ղ.Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 67-70, Մ.Գևորգեանց, Համառոտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակա և մայրաքաղաքին Անւոյ, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 34, K.Basmadjian, Les inscriptiers armeniennes d'Ani, de Bagnairet de Marmachen, Paris, 1931, p. 8; Հ.Օրբելի, նշվ. աշխ., էջ 35, տախտ. XIII:

[6] Ղ.Ալիշան, նշվ. աշխ., էջ 67-70; Н.Марр, Ани, Л.-М., 1934, с. 121; K.Basmadjian, Op. cit, №8, Նույնի՝ Անիի արձանագրութեանց առթիւ (Հանդէս ամսօրյա, 1932, № 7-9, էջ 536-539), Ն.Ակինյան, Անիի մայր եկեղեցվո և միջնաբերդի եկեղեցվո արձանագրություններու մասին (նույն տեղում, էջ 539-541), Աշ.Աբրահամյան, Ժամանակագրական ճշգրտումներ (նույն տեղում, 1978, էջ 158-161), Նույնի՝ Հայոց գիր և գրչություն, Ե., 1973, էջ 129, Ա.Մանուչարյան, Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վիայագրերի, Ե., 1977, էջ 207-209, Ս.Ավագյան, Անիի մայր տաճարի

Անիի մայր տաճարի չինարարական արձանագրության փաստագրված համաժամանակյա տարեթվերը մինչև այժմ ըստ էության չեն մեկնաբանվել, ինչպես հատկապես արձանագրության, այնպես էլ ընդհանրապես հայ մատենագրության մեջ գրառված տարբեր թվականության համակարգերի օրինաչափությունները թերի դիտարկելու հետևանքով: Այդ է հիմնական պատճառը, որ Անիի կաթողիկեի հիմնադրման ավարտի և բնագրի փորագրման ժամանակի վերաբերյալ կան հակասական տեսակետներ: Համաժամանակյա թվականների ստուգման և ճշտման մեր կողմից առաջադրված եղանակը[7] հնարավորություն է տալիս բացահայտել Անիի մայր տաճարի արձանագրության առեղծվածային թվացող տարեթվերը:

Հետազոտության նպատակն է նորովի վերծանել և լիովին մեկնաբանել արձանագրության համաժամանակյա տարեթվերը: Այն հնարավորություն է տալիս հստակություն մտցնել նաև Անիի Կաթողիկեի մասին եղած մատենագրական վկայությունների մեջ: Նախքան համաժամանակյա թվականների վերլուծությանն անցնելը անենք մի քանի դիտողություն արձանագրության վավերականության հռոմեական փոքր թվականի օրինաչափությունների և համաժամանակյա տարեթվերի դասակարգման մասին: Դրանք այն նախադրյալներն են, որոնց վրա հիմնվելու են մեր հետևությունները:

Իսադրի վավերականության վրա կասկած է հայտնել Ն.Մառը, այն համարելով XIդ. վերջի և XIIդ. ընդօրինակություն[8]: Ն.Մառը, Ն.Ակինյանը[9] և Պ.Մուրադյանը ենթադրել են, որ Անիի կաթողիկեի արձանագրության մեջ առկա է վրացական քրոնիկոնի տարեթիվը: Այս ենթադրությունը թեև նրանք չեն հիմնավորել, սակայն հարկ ենք համարել անդրադառնալ վրացական քրոնիկոնի թվականին՝ դրանից բխող հետագա թյուրիմացություններից խուսափելու համար: Պետք է նշել, որ հայ մատենագրության մեջ վրացական քրոնիկոնի մեծ թվականը, իբրև համաժամանակյա տարեթիվ, չի փաստագրվել: Հայերեն գրչագիր հիշատակարաններում վրացական քրոնիկոնի փոքր թվականի (սկիզբը՝ 1313թ.) կիրառության մեկ օրինակ, իբրև համաժամանակյա տարեթիվ, գտել ենք Թբիլիսիում XVդ. ընդօրինակած ձեռագրում[10], որն այդպես էլ անվանվել է. այն է՝ քրոնիկոնի թվական: Պարզ է, որ հայերեն ձեռագիր և վիմագիր մատյաններում վրացական քրոնիկոնի թվականները (մեծ և փոքր) երբեք հռոմեական չեն անվանվել: Անիի արձանագրության մեջ տեղ է գտել հռոմեական փոքր թվականը: Ի դեպ, Հովհաննես Սարկավագն այդպես էլ անվանում է, այն է՝ «Հռոմայեցոց փոքրն»[11]:Այն երբեք չէր կարող փոխարինել վրացական քրոնիկոնի մեծ թվականին, թեև վրացական քրոնիկոնի մեծ թվականը փոխառություն էր հռոմեական փոքր թվականի: Դրանք ստեղծվել են տարբեր հիմքերի վրա՝ մեկը Հռոմի հիմնադրման, մյուսը՝ արարչության թվականի վրա:

չինարարական արձանագրության տարեթվերը, Վիմագրական պրպտումներ, Ե., 1986, էջ 16–26, П.Мурадян, Хронология систем летосчислений по армянским источникам "Грузинский хроникон", Кавказ и Византия, Е., 1988. с., 61–71:

[7] Ռ.Հ.Վարդանյան, Անանիա Շիրակացու հետազոտությունների մեկնության դուրջը և մի քանի տոմարական-ժամանակագրական հարցեր (Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 1, էջ 195–201):

[8] Н.Марр, նշվ. աշխ., էջ 121:

[9] Ն.Ակինյան, նշվ. աշխ., էջ 539–541, П.Мурадян նշվ. աշխ., էջ 61–71:

[10] ԺԵ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, մաս 2, Ե., 1958, էջ 169:

[11] Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956, էջ 278:

Հայ մատենագիրները հռոմեական (հռոմայեցոց փոքրն, հոռոմոց, հռովմին շրջանին, հոռոմին, հռովմեացւոց, հոռոմեացւոց և այլն) թվական ասելով ընկալել են Հռոմի հիմնադրման 2-րդ և մասամբ 3-րդ հազարամյակի թվականները, այն է՝ մեծ, փոքր, փոքրագույն, որոնք Հռոմի հիմնադրման թվականի օրինական շարունակություններն էին 532-ամյա պարբերաշրջաններով: Հայ մատենագրության մեջ Հռոմի հիմնադրման միստիկ թվականի կիրառման վկայություններ գտնում ենք V-VIIդդ. և հետագայում, հռոմեական մեծ թվականի՝ IX-X դդ., հռոմեական փոքր թվականի՝ XI-XIIդդ. (մինչև 1185թ. Մխիթար Գոշի Դատաստանագրքի հիշատակարանը, որից հետո մեզ հայտնի չէ), հռոմեական փոքրագույն թվականի՝ XVIIդ. ընթացքում:

Ակնհայտ է, որ վրացական քրոնիկոնի թվականի փաստով անհնար է Անիի կաթողիկեի շինարարական արձանագրության վավերականությունը կասկածի տակ առնել: Տեսնենք՝ հռոմեական փոքր թվականը մյուս համաժամանակյա տարեթվերի հետ ինչ օրինաչափություններ է դրսևորվում:

Հիշատակենք XIIդ. հայկական սկզբնաղբյուրներից մի քանի վկայություններ[12] համոզվելու համար հռոմեականի փոքր տարբեր թվականության համակարգերի՝ իրար հետ ունեցած փոխառնչությունների մեջ:

Վերոհիշյալ համաժամանակյա տարեթվերը կունենան հետևյալ տեսքը:

Աղյուսակ 1

Թիվ	Զուգահեռ թվականներ	Թվերից ստացված մնացորդները	19-ամյակի հմպտ. լուսնի լրման տարին	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լրումը
1	2	3	4	5
1.	333(Հռոմեական փոքր թվական)	10	A4	A13
	29 (Հայոց փոքր կամ Սարկավագադիր թվ. արեգի 11, չորեքշաբթի)	10	A4	A13
	1867 (Հռոմի շինության թվական)	5(+5)	A4	A13
	830 (Դիոկղետիանոսի էրա)	13(-1)	A4	A5(6)
	1163 (Անաիոքի շինության թվական)	4(-2-1=-3)	A4	A4
	1425 (Կյուրղոսի շին. թվական)	19(+1)=1	A4	A4
	1115 (Քրիստոնեական հայկ. թվական)	13(-2-1=-3)	A4	A13
	6313 (Արարողություն 70-ից թվական)	5(-4)	A4	A4
	562 (Հայոց մեծ թվական) նավասարդի 27, չորեքշաբթի	11(-1)	A4	A13
	1889 (473 օլիմպ. 1-ին տարին)	8(+1)	A4	A2
	1113 (Քրիստոնեական դիոնիսյան կամ ներկա թվական), մարտի 19, չորեքշաբթի	11(-1)	A4	A13

[12] Նույն տեղում: Վենետիկ, Մատենադարան, ձեռ. №314, էջ 216, Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. №5602, էջ 268 բ-272 բ, ձեռ. № 488, էջ 12 բ-13 բ:

1	2	3	4	5
2.	89 (Սարկավագաղիր թվական)	13	A1	A13
	393 (Հռոմեական փոքր թվական)	13	A1	A13
	1173 (Քրիստ. դիոնիսյան թվական)	14(-1)	A1	A13
3.	627 (Հայոց մեծ թվական)	19 (-1)	A5	A13
	94 (Սարկավագաղիր թվական)	18	A5	A13
	1179 (Քրիստ. հայկ. թվական)	1(-1-1-2)-18	A6	A13
	398 (Հռոմեական փոքր թվական)	18	A6	A13
	1178 (Քրիստ դիոնիսյան թվական)	19 (-1)	A6	A13
4.	633 (Հայոց մեծ թվական)	6	A18	A13
	101 (Սարկավագաղիր թվական)	6	A18	A13
	405 (Հռոմեական փոքր թվական)	6	A18	A13
	1185 (Քրիստոնեական դիոնիսյան թվական)	7(-1)	A18	A13

Ինչպես նկատելի է, փաստարկված բոլոր տարեթվերում հռոմեական փոքր և քրիստոնեական դիոնիսյան թվականների տարբերությունը 780 է: Հռոմեական փոքր և քրիստոնեական հայկական թվականների տարբերությունը 782 (1-ին օրինակ) և 781 է (3-րդ օրինակ): Կարող է պատահել նաև 783, 784: Այսպիսով հռոմեական փոքր թվականը քրիստոնեական դիոնիսյանի կամ ներկա թվականի վերածելիս տարբերությունը միշտ ավելի փոքր է, քան քրիստոնեական հայկական թվականների դեպքում: Դա օրինաչափ է, քանի որ քրիստոնեական հայկական թվականի բոլոր տարբերակներով Քրիստոսի ծննդից մինչև տվյալ թվականը համարել են մեկ, երկու և երեք (չորս) տարով ավել, քան քրիստոնեական դիոնիսյան թվականով: Ակնհայտ է, որ ուսումնասիրողների կողմից հռոմեական փոքր թվականից քրիստոնեական դիոնիսյան թվական ստացած թվերը, այսինքն՝ տարբերությունները, որ գումարվել են նրան (781-ը՝ ըստ Ն.Ակինյանի, 779-ը, 783/4-ը՝ ըստ Աշ. Աբրահամյանի են), ընդունելի չէ: Հռոմեական փոքր թվականը ժամանակակցի վերածելու համար միշտ տված թվականին պետք է գումարել 780:

Կասկածից վեր է, որ Անիի արձանագրությունը փորագրել է Բենեն: Դա բնավ չի նշանակում, որ արձանագրության տարբեր մասերում վկայված համաժամանակյա տարեթվերը մեկ խումբ են կազմում:

Անիի կաթողիկեի արձանագրության մեջ փաստագրվել է երկու խումբ համաժամանակյա տարեթվեր: Դրանք, մի կողմից, գրվել են արձանագրության տարբեր մասերում, մյուս կողմից, այդ երկու խումբ համաժամանակյա տարեթվերը տարբեր թվականության համակարգերով արտահայտել են երկու թվական: Դրանց ապացույցները արձանագրության թվականների մեջ են: Այսպես՝ արարողության Շ-եակ թվականից, այն է՝ 6433-ից, որն առկա է բնադրի 2-րդ հատվածում, հանենք 5976 (արարչությունից մինչև հայոց մեծ թվականն ընկած ժամանակահատվածը, ըստ մատենագրական-ռոմարական

ընագրերի), կստանանք 457 (6433–5976) մեծ թվականը: Ակնհայտ է, որ առաջին խմբում վկայված հայոց մեծ թվականները, այն է՝ 450-ը և 457-ը, համարժեք չեն միմյանց: Ուշագրավ է, որ հայոց 457 թվականը վկայել է Հովհաննես Իմաստասերը իր Ժամանակագրության մեջ, որի մասին՝ ստորև:

Առաջին տողում վկայված 450-ին՝ հայոց մեծ թվականին, գումարենք 5976, կստանանք 6426, որն համարժեք չէ 6433-ին: Դրանք տրված են կամ ստացված արարողության Շ-եակ թվականով և ունեն յոթ տարվա տարբերություն (6433–6426=7):

Հռոմեական փոքր թվականի օգնությամբ, որ տեղ է գտել ընագրի 1-ին մասում, ստանալով քրիստոնեական դիոնիսյան թվականը, այն է՝ 999(219+780)[13], տեսնում ենք, որ այն համարժեք չէ վկայված 1012-ին՝ քրիստոնեական հայկական թվականին: Պարզ է, որ արձանագրության մեջ գործ ունենք երկու խումբ տարբեր թվականության համակարգերով արտահայտված տարեթվերի հետ:

Բնագրում համաժամանակյա տարեթվերի 1-ին խումբը արձանագրվել է առաջին տողում, այն է՝ «Ի ՆԾ Թ(ուին) հայոց ՄԺԹ Թ(ուին) Հռոմոց, ԹՂԳ ամին գէբր»:

Դառնանք վկայված թվականների վերլուծությանը: Հայոց մեծ թվականը, այն է՝ ՆԾ-ն (450) հստակ վերծանվում է: Ուսումնասիրողներին այն դժվարություն չի հարուցել: Ղ.Ալիշանը «Շիրակ» աշխատության մեջ հայոց մեծ թվականն ընկալել է ՆԾ (450)[14], սակայն արձանագրության մեջ թողել է ՆԾԹ (459)[15], Աշ.Աբրահամյանը Ղ.Ալիշանի առաջին տեսակետը անտեսել է և նախընտրել երկրորդը: Նա նույնպես հայոց մեծ թվականը կարդացել է ՆԾԹ (459)[16]: Այս վերծանության դեմ համոզիչ կերպով առարկել է Ս.Ավագյանը: Նա գրել է. «Այս մեկնությունն (ՆԾԹ կարդալը–Ռ.Վ.) անընդունելի է, քանի որ հենց հաջորդ տարեթվում ևս նույն Թ գիրը, նույնպիսի իրադրության մեջ կիրառված է իբրև թուին, թուականին բառերի նախահունչ գիր՝ ՄԺԹ Թ հռոմոց: ակնհայտ է, որ այստեղ Թ-ն չէր կարող նշանակել 9 թիվ, այլ միայն՝ թուին, թուականին»[17]: Այս դիտողությունը բխում է արձանագրության ներքին տրամաբանությունից: Ասենք միայն, որ Աշ.Աբրահամյանի տեսակետն արդյունք է այն բանի, որ արձանագրության բոլոր տարեթվերն ընդունել է իբրև մեկ թվականի պրտահայտության տարբեր թվականության համակարգերով, որն, ինչպես տեսանք, հերքվում է՝ տարեթվերը երկու խմբի բաժանելիս:

Կասկած չի հարուցում այն, որ արձանագրության մեջ գրված է «ի ՆԾ (450) Թ(ուին կամ թուականին) հայոց»:

Ժամանակակից տարեթիվը վերծանելու համար հայոց մեծ թվականին, այն է՝ 450-ին, պետք է գումարել 551 կամ 552, քանի որ 450-ի ամսաթիվը հայտնի չէ: Ուսումնասիրողները մինչև այժմ 450-ին գումարել են 551 և ստացել 1001 թվական: Արձանագրության այլ թվականների (հռոմեական փոքր, հիջրայի, արարչության Շ-եակ, քրիստոնեական հայկական են) հետազոտության ժամանակ կտեսնենք, որ 450-ին պետք է գումարել 552: Հարկ է նշել, որ հայկական տոմարական ընագրերում քրիստոնեական թվական

---

[13] Ճիշտը՝ 1002 թվական (222+780):
[14] Ղ.Ալիշան, նշվ. աշխ., էջ 67–70:
[15] Նույն տեղում:
[16] Աշ.Աբրահամյան, Ժամանակագրական ճշտումներ, էջ 158–161, նույնի՝ Հայոց գիր և գրականություն, էջ 129:
[17] Ս.Ավագյան, նշվ. աշխ., էջ 17:

ստանալու համար ասվում է, որ պետք է վերցնել հայոց թվականը, գումարել 552 (ուշ շրջանում նաև 553), կստանանք Քրիստոսի թվականը[18]: Այսպես են մտածել և գործել արձանագրությունը կազմող հեղինակները (Ասողիկ, Հովհաննես, Կոզեռն ևն)[19]: Նրանք ելել են հայոց Շ-եակի հռոմեացոց շարքի օրինաչափություններից, ինչպես և հայոց մեծ թվականի տոմարական կանոնից: 450-ին գումարելով 552, ստանում ենք 1002 թվականը:

Երկրորդ տարբերիչն արձանագրության մեջ տեղ է գտել «ՄԺԹ(219) թ(ուին) հռոմոց»: Ն.Ակինյանը հռոմեական փոքր թվականը վեր է ածել ժամանակակցի, այն է՝ 1000-ի՝ 219-ին գումարելով 781[20]: Ինչպես վերը տեսանք, հռոմեական փոքր և դիոնիսյան թվականների տարբերությունը 780 է: Տված թվին գումարելով 780, ստանում ենք 999 (219+780)[21]:

Աշ.Աբրահամյանը հռոմեական փոքր թվականի համար առաջարկել է չհիմնավորված երկու տարբերակ, այն է՝ փաստագրված «ՄԺԹԹ»-ի վերջին Թ-ին տալ թվի նշանակություն, որն ընդունելի չէ: Հնարավոր չէ երկու միավոր միևնույն տեղում միանգամից միավոր-թիվ կարդալ: Նա միաժամանակ կարծել է, որ ՄԺԹ-ն պետք է սրբագրել ՄԹԹ, որը հիմնավորված չէ: Աշ.Աբրահամյանը 228-ին (իր սրբագրած 229-ի փոխարեն) գումարել է 783/4 (իր հաշվումներով դտած 779/780-ի փոխարեն) և ստացել 1011/12 թվական[22]: Հռոմեական փոքր և դիոնիսյան քրիստոնեական թվականների տարբերությունը 780 է, ուստի վերոհիշյալ թվերն ընդունելի չեն: Դժվար չէ նկատել, որ գրողը հռոմեական փոքր թվականը տալիս սխալ է թույլ տվել: Այն ուղղելի է, երբ դիտարկում ենք հռոմեական փոքր և հայոց մեծ թվականների օրինաչափությունները: Հայկական տոմարական ընագրերում[23] թվականի կանոն տալիս ասվում է, որ պետք է վերցնել հայոց մեծ թվականը, հանել 228 (ուշ շրջանում՝ 229), կստանանք հռոմեական փոքր թվականը կամ հռոմեական փոքր թվականին գումարել 228 (ուշ շրջանում՝ 229), կստանանք հայոց մեծ թվականը: Վերը բերված աղյուսակից երևում է, որ հայոց մեծ և հռոմեական փոքր թվականների տարբերությունը 228 է, հայոց մեծ թվականին 552 գումարելու դեպքում և 229-ը՝ 551-ի: Արձանագրության մեջ վկայված 450-ից հանենք 219-ը, կստանանք 231, մինչդեռ այն պետք է լիներ 228/9: Փորագրողի սխալը երևում է 19-ամյակի վրա վերոհիշյալ թվերի բաժանումից ստացված մնացորդներից, եթե 450-ը բաժանենք 19-ի, մնացորդը կստանանք 13, իսկ 219-ի բաժանելուց ստացված մնացորդը 10 է: Մինչդեռ վերոհիշյալ աղյուսակից պարզ է դառնում, որ հայոց մեծ և փոքր հռոմեական թվականների բաժանումից ստացված մնացորդները կամ պետք է հավասար լինեն միմյանց (552 գումարելու դեպքում), կամ հայոցի մնացորդը պետք է լինի հռոմեականից մեկով ավելի (551 գումարելու դեպքում): Ի դեպ, հայոց և հռոմեական մեծ և փոքր թվականների

---

[18] ՄՄ, ձեռ. 1999, էջ 22ա-բ, 62ա, 68ա, 192ա, 213ա, 214բ, ձեռ. 1973, էջ 60ա, ձեռ. 2001, էջ 4ա, 16ա, 30ա, ձեռ. 3082, էջ 383ա, ձեռ. 1114, էջ 5ա-10բ, 105ա:

[19] Սաեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 82-83, ՄՄ, ձեռ. 1999, էջ 27ա, 67բ, Մ.Չամչեան, Պատմութիւն հայոց, հ. 2, Վենետիկ, 1785, էջ 509:

[20] Ն.Ակինյան, նշվ. աշխ., էջ 539-541:

[21] Եթե հռոմեական փոքր թվականը ստույգ համարենք, ապա կստանանք 999 (219+780): Այս դեպքում պետք է ընդունենք, որ հայոց մեծ թվականը սխալ է, որը քիչ հավանական է:

[22] Աշ.Աբրահամյան, Ժամանակագրական ճշտումներ, էջ 158-161, նույնի՝ Հայոց դիր և դպրություն, էջ 129:

[23] ՄՄ ,ձեռ. 2001, էջ 21բ, 30ա, 1114, էջ 12բ, Հովհ. Իմաստասերի մատենագրությունը, էջ 210, 226, 234 են:

19-ամյակների 1-ին տարին նույնն է, այսինքն՝ լուսնի լրումը երկուսի 1-ին տարում սկսում է A13-ից:

Վերն ասվածից երևում է, որ հռոմեական փոքր թվականը փորագրելիս թույլ է տրվել երեք տարվա սխալ: «ՄԺԹ թ(ուին) հոռոմոց»-ը պետք է սրբագրել «ՍԻԲ թ(ուին) հոռոմոց» (222-ին զումարենք 780, կստանանք 1002 թվական):

Հաջորդ համաժամանակյա տարեթիվը նույնպես տարբեր կարծիքների տեղիք է տվել: Բանն այն է, որ արձանագրության առաջին տողի վերջում առկա են հայերեն տառերով գրված երեք փակագրեր: Առաջին փակագիրը մյուս երկուսից անջատված է վերջակետով, որը և ցույց է տալիս նրա թվական լինելը: Ուսումնասիրողները վերջակետը չեն նշմարել, սակայն կռահել են, որ այն հիջրայի թվականն է: Վերջինս, կրոնական նկատառումներով, տրված է փակագրով: Երկրորդ փակագիրը Ղ.Ալիշանը կարդացել է ամին: Ուսումնասիրողներն ընդունել են այդ ընթերցումը: Երրորդ փակագիրը Աշ.Աբրահամյանը իրավամբ վերծանել է ԳԷԲՐ (անհավատ, հեթանոս)[24]:

Ն.Ակինյանը առաջին փակագիրը կարդացել է աջից ձախ գրությամբ և վերծանել ՅՂ(390)[25]: Այդ վերծանումն իրավացի առարկել են ուսումնասիրողները: Աշ.Աբրահամյանը առաջին փակագիրը ընթերցել է ձախից աջ գրությամբ և վերծանել ՆԲ(402)[26]: Եթե փակագիրը կարդանք ձախից աջ, նկատվում են Ն, Ե, Բ տառերը, ինչպես նշել է Ս.Ավագյանը[17], սակայն փակագիրը, ձախից աջ կարդալով, մի կողմից, ղրկվել է իմաստից, մյուս կողմից, ձախ մասում եղած ստեղն անտեսվել է: Վերջապես՝ առաջին տողի համաժամանակյա տարեթվերին չի համապատասխանում: Հետևաբար՝ ՆԲ (402) կարդալը ընդունելի չէ:

Առաջարկում ենք առաջին փակագիրը կարդալ գլխիվայր շրջված՝ ձախից աջ գրությամբ: Այս դեպքում առկա է ՅՂԳ (393) թիվը, որը հաստատվում է նաև հաշվումներով՝ ըստ Հ.Բաղալյանի առաջարկած հիջրայի թվականից ներկա թվական զտնելու բանաձևի[28], 393+621-393/33=1003, մնացորդ՝ 30:

1003-ից, ինչպես նշել է Հ.Բաղալյանը, պետք է հանել ստացված մնացորդը: Պարզ է, որ հիջրայի 393 թվականը համարժեք է ներկա 1002/3 թվականներին՝ ըստ Հ.Բաղալյանի առաջարկած բանաձևի՝ 1002-621+(1002-621)/32=392, մնացորդ՝ 29≈393: Ճշմարտացի կլիներ 392 թվականը: Այլ խոսքով, փակագիրը վերծանվում է «ՅՂԳ (393) ամին գէբր», այսինքն՝ հիջրայի 393 թվական, որը համարժեք է 1002/3թթ.:

Այսպիսով՝ Անիի կաթողիկեի արձանագրության առաջին տողի երեք համաժամանակյա թվականներով ստացվում է ներկա 1002 թվականը:

Արդ՝ տեսնենք որքանով է այդ թվականը հաստատվում մատենագրական վկայություններով: Անիի մայր տաճարի կառուցմանը և ավարտին ականատես Ասողիկը գրում է.

1. «Արկանէ (Սմբատ Թագավոր-Ռ.Վ.) հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն

---

[24] Կ.Բասմաճյանի և նրա հետևողությամբ Ա.Մանուչարյանի և Պ.Մուրադյանի հիշյալ փակագրերի վերծանությունը, այն է՝ «Բենիամին գրէ», հերքվել է ուսումնասիրողների կողմից: Դրանց կարող ենք ավելացնել այն, որ առաջին փակագիրը մյուս երկուսից անջատված է վերջակետով, որը նշանակում է, որ այն թվական է:

[25] Ն.Ակինյան, նշվ. աշխ., էջ 539-541:

[26] Աշ.Աբրահամյան, ժամանակագրական ճշտումներ, էջ 158-161:

[27] Ս.Ավագյան, նշվ. աշխ., էջ 20-22:

[28] Հ.Բաղալյան, Օրացույցի պատմություն, Ե., 1970, էջ 228-229:

քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանէն եկեղեցին շինեաց յԱրգինայ»:

2. «...Կին նորա (Դաւիթ Թագաւորի-Ռ.Վ.) Կատրամիդէ Թագուհի բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր Վասակայ Սիւնեաց իշխանի շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք զմբեթաւորեալ խորան երկնանման, և զարդարեաց ի զտրդ ծիրանեծաղիկ ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որովք ջանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ»[29]:

Այսպիսով՝ Ասողիկի վկայությունները բերում են այն հետևության, որ Անիի կաթողիկեն Սմբատ Թագավորի հրամանով է սկսել կառուցել Տրդատ ճարտարապետը Արգինայի եկեղեցու կառուցման ավարտի տարում 990 թվականին (կամ փոքր-ինչ ավելի շուտ): Այն ընդհատվել է Սմբատ Բագրատունու մահվան (991թ. ձմռանը) հետևանքով, որը վերսկսել է նրա եղբոր՝ Դավիթ Թագավորի կինը՝ Կատրամիդե Թագուհին և ավարտել 1002 թվականին: Ասողիկը, ինչպես երևում է նրա տեղեկություններից, Անիի մայր եկեղեցին տեսել է պատրաստ վիճակում և նկարագրել: Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է մի կարևոր և էական փաստ, այն, որ Ասողիկը իր պատմությունը, ինչպես երևում է գրքի հիշատակարանի համաժամանակյա տարեթվերից[30], ավարտել է 1005 թվականին: Հետևաբար՝ Անիի տաճարի շինարարական արձանագրության առաջին տողի համաժամանակյա տարեթվերը կառուցման ավարտի տարին են փաստագրել: Մանավանդ որ առաջին խմբի համաժամանակյա տարեթվերից հետո գրված է. «շինեցի զսուրբ կաթողիկէս»:

Անիի կաթողիկեի շինարարական արձանագրության 19, 20 և մասամբ 21 տողերում փաստագրվել են երկրորդ խումբ համաժամանակյա տարեթվերը՝ թվականության տարբեր համակարգերով, այն է՝ «ի վեց ՌՆԼ Եւ Գ(6433) ամացն Ադամա[յ], ի ՌԵԼ ԲԺ(1012) ամի Մարմնանալա[յ] աստուածն (կամ աստուածային) բանի, ՉԺԱ (711) ամի հավատալո[յ]'ի Քրիստոս հայոց»:

Արարչության 6433 տարեթվի վերծանման հարցում ուսումնասիրողները համերաշխ են, սակայն վերլուծության մեջ՝ տարակարծիք, քանի որ այդքան էլ հատուկ պատկերացում չեն ունեցել արարչության Շ-եակ և տարբեր թվականների օրինաչափությունների մասին:

Բնագրում առկա քրիստոնեական հայկական թվականի համեմատությունը արարչության տարեթվի հետ ցույց է տալիս, որ նկատի է առնվել արարչության Շ-եակ կամ Շիրակացու թվականը: 6433-ից հանենք 1012, կստանանք արարչության Շ-եակ և քրիստոնեական հայկական թվականի 2-րդ տարբերակի տարբերությունը. այն է՝ 5421: Մի քանի վկայությունների[31] օգնությամբ տեսնենք, թե ինչ օրինաչափություն ունի արարչության Շ-եակը մյուս թվականների հետ:

Վերը նշված համաժամանակյա տարեթվերը կունենան հետևյալ պատկերը:

---

[29] Ասողիկ, էջ 187, 256:

[30] Նույն տեղում, էջ 285, արձանագրությունը:

[31] ՄՄ, ձեռ. 5736, 1315, էջ 452ա-453ա, Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտի արխիվ, ձեռ. 65, ՄՄ, ձեռ. 7629, Մբ. Գևորգ եկեղեցու արխիվ (Լոնդոնի ցուցակ, էջ 5), Երուսաղեմի Սբ. Հակոբ վանքի Մատենադարան, ձեռ. 2594 և այլն:

Աղյուսակ II

Թիվ	Զուգահեռ թվականներ	Թվերից ստացված մնացորդները	19-ամյակի հմպտ. տարվա լուսնի լրումը	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լրումը
1	2	3	4	5
	Դիոնիսյան-Հայոց քրիստոնեական թվականի առաջին տարբերակ			
1.	6501/արարչության Ե-եակ թվական	3	A12	A4
	1077 (քրիստոնեական դիոնիսյան-հույնական թվական)	13(-1)	A12	A13
	525 (Հայոց մեծ թվական)	12	A12	A13
2.	637 (Հայոց մեծ թվական)	10(-1)	A15	A13
	6612 (արարչության Ե-եակ թվական)	19	A15	A4
	1188 (քրիստոնեական դիոնիսյան-հայկական թվական)	10(-1)	A15	A13
3.	6630 (արարչության Ե-եակ թվական)	18	M27	A4
	1206 (քրիստոնեական դիոնիսյան-հայկական թվական)	9(-1)	M27	A13
	654 (Հայոց մեծ թվական)	8	M27	A13
	Հայոց քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակ			
1.	6464 (արարչության Ե-եակ թվական)	4(-3)	A4	A4
	1040 (քրիստոնեական հայկական թվական)	14(-4)	A4	A13
	485(Հայոց մեծ թվական թվական)	10	A4	A13
	1037 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	11(-1)	A4	A13
2.	6714 (արարչության Ե-եակ թվական)	7	M29	A4
	1293 (քրիստոնեական հայկական թվական)	1(-4)=16	M29	A13
	739 (Հայոց մեծ թվական թվական)	17(–1)	M29	A13
	1290 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	17(-1)	M29	A13
	Հայոց քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակ			
1.	6606 (արարչության Ե-եակ թվ.)	13(-1)	A2	A4
	1183 (քրիստոնեական հայկական թվական)	5(-3)	A2	A13
	630 (Հայոց մեծ թվական)	3(-1)	A2	A13
	1181 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	3(-1)	A2	A13

1	2	3	4	5
2.	6716 (արարչության Շ-եակ թվական)	9(-1)	A17	A4
	1293 (քրիստոնեական հայկական թվական)	1(-3)=17	A17	A13
	740 (Հայոց մեծ թվական)	18(-1)	A17	A13
	1291 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	18(-1)	A17	A13
3.	6724 (արարչության Շ-եակ թվական)	17(-1)	A18	A4
	1301 (քրիստոնեական հայկական թվական)	9(-3)	A18	A13
	748 (Հայոց մեծ թվական)	7(-1)	A18	A13
	1299 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	7(-1)	A18	A13
4.	763 (Հայոց մեծ թվական)	3(-1)	A2	A13
	1316 (քրիստոնեական հայկական թվական)	5(-3)	A2	A13
	6739 (արարչության Շ-եակ թվական)	13(-1)	A2	A4
	1314 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	3(-1)	A2	A13

Վերը բերված աղյուսակների քննությունը ցույց է տալիս, որ արարչության Շ-եակ և Հայոց մեծ թվականների տարբերությունը հիմնականում ընդունվել է 5976: Այս թվականն են օգտագործել Հովհաննես Կոզեռնը, Հովհաննես Սարկավագը և այլ հեղինակներ[32], իբրև արարչությունից մինչև Հայոց մեծ թվականը ընկած ժամանակահատված: Հովհաննես Սարկավագը այդ թվականն անվանել է Շ-եակ, իսկ Գրիգոր Տաթևացին՝ Շիրակացու թվական[33]: Հայկական տոմարական բնագրերում ասված է, որ պետք է 5976-ին գումարել Հայոց մեծ թվականը, կստացվի արարչության Շ-եակ թվականը[34]: Սա նշանակում է, որ Հայոց մեծ թվականի կիրառողները արարչության Շ-եակ թվականի 5976 տարին համարժեք են ընդունել 552 ներկա թվականին: Հայտնի է, որ Հայոց մեծ թվականի առաջին տարին համընկնում է հուլյան տոմարի երկու տարվա կեսերի հետ: Այդ իրողությունը գիտակցել են որոշ բնագրերի հեղինակներ: Ըստ Հակոբ Ղրիմեցու, արարչության Շ-եակ և Հայոց մեծ թվականի տարբերությունը 5975 տարի է[35]: Սա ցույց է տալիս, որ արարչության Շ-եակ թվականից հանել է մեկ թիվ: Կան բնագրեր, երբ Հայոց մեծ թվականին մեխանիկորեն գումարել են 5976, ինչպես ասվում է թվականի կանոնում, նույնիսկ այն դեպքում, երբ Հայոց մեծ թվականին գումարվել է 551 (մինչև 1300թ.) և 550 (1320թ. հետո): Նման դեպքում արարչության Շ-եակ թվականից պետք է հանել մեկ, ինչպես արվել է աղյուսակում, կամ երկու թիվ (ուշ միջնադար), որպեսզի ստանանք և՛ ճիշտ թվականը, և՛ 19-ամյակի տարին:

[32] Մ.Զամչեան, նշվ. աշխ., էջ 509; Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 224:
[33] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 451:
[34] ՄՄ, ձեռ. 1999, էջ 22ա-բ, 62ա և այլն:
[35] Նույն տեղում, ձեռ. 1114, էջ 5ա (6840-865+5975):

Այսինքն՝ արարչության Շ-եակ թվականի 5974 տարին համարժեք է 550 թվականին, 5975-ը՝ 551-ին, 5976-ը՝ 552-ին, 5977-ը՝ 553-ին և այլն:

Աղյուսակից միաժամանակ երևում է, որ արարչության Շ-եակ և քրիստոնեական դիոնիսյան թվականների տարբերությունը 5424 է: Այսպես է նաև արարչության Շ-եակ և Հայոց մեծ թվականից ստացված այն խմբի համար, որոնց գումարվում է 552: Արարչության Շ-եակ և քրիստոնեական դիոնիսյան թվականների տարբերությունը՝ 5425-ը և 5426-ը ցույց է տալիս, որ Հայոց մեծ թվականին գումարվել է 551 և 550. արարչության Շ-եակ թվականից պետք է հանել մեկ և երկու տարի: Արարչության Շ-եակ և քրիստոնեական հայկական թվականների 2-րդ և 3-րդ տարբերակների տարբերությունը 5421 և 5423 է, այսինքն՝ միշտ փոքր քրիստոնեական դիոնիսյան թվականի տարբերությունից: Այս դեպքում տարբերությանը պետք է գումարել երեք և մեկ տարի, որովհետև դրանք քրիստոնեական հայկական թվականի այն տարբերակներն են, որոնց հեղինակները կարծել են, թե Հայոց մեծ թվականի առաջին տարին համարժեք է 554 և 556 ներկա թվականներին: Արարչության Շ-եակ և քրիստոնեական հայկական թվականների տարբերությունը դարձել է 5421 և 5423: Հետևաբար՝ արարչության Շ-եակ և քրիստոնեական թվականների տարբերությունը 5424 է, տվյալ Շ-եակ թվականից որևէ թիվ չի հանվում, որովհետև դրանք համարժեք են, իսկ երբ տարբերությունը 5425 և 5426 է, արարչության Շ-եակ թվականից հանվում է մեկ և երկու միավոր, վերջապես՝ 5421 և 5423 տարբերության դեպքում դրանց գումարվում է երեք և մեկ, քրիստոնեական թվականից համապատասխանորեն հանվում է երեք և մեկ: Այլ խոսքով՝ արարչության Շ-եակ և քրիստոնեական դիոնիսյան թվականների տարբերությունը միշտ 5424 է, քրիստոնեական հայկական թվականներինը՝ տարբեր:

Ակնհայտ է, որ արարչության Շ-եակ և քրիստոնեական դիոնիսյան թվականների տարբերությունների համար ուսումնասիրողների փաստարկած մի շարք թվեր ընդունելի չեն (5423՝ Ն.Ակինյանի և Աշ. Աբրահամյանի, 5422՝ Աշ. Աբրահամյանի և այլն): Արարչության Շ-եակ և մյուս թվականների օրինաչափությունների բացահայտումից հետո դժվար չէ պարզել քննարկվող արարչության Շ-եակ և այլ թվականների էությունը և դրանք վերածել ժամանակակից թվականի: Այն հնարավորություն է տալիս ճշտել Անիի կաթողիկեի արձանագրության համաժամանակյա տարեթիվը:

Անիի մայր տաճարի արձանագրության բնագրում հիշատակված 6433 արարչության Շ-եակ թվականից հանելով 1012 քրիստոնեական հայկական թվականը, ստանում ենք 5421: Ուրեմն՝ քրիստոնեական դիոնիսյան թվականը գտնելու համար արարչության Շ-եակ թվականից ստացված տարբերությանը, այն է՝ 5421, պետք է գումարել երեք միավոր, այսինքն՝ ստանալ 5424 (5421+3):

Պարզ է, որ փաստագրված քրիստոնեական հայկական թվականից, այն է՝ 1012, պետք է հանել երեք թիվ, որպեսզի քրիստոնեական հայկականից (թվականի երկրորդ տարբերակը) ստանանք քրիստոնեական դիոնիսյան թվականը, քանի որ դրանք փոխադարձ կապի մեջ են:

Այլ խոսքով՝ վկայված 6433 թվից հանենք 5424, կստանանք 1009 թվական:

Անիի մայր տաճարի արձանագրության մեջ հաջորդ համաժամանակյա տարեթիվը նշվել է այսպես՝ «Ի Ռ եւ ԲԺ ամի մարմնալո [յ] Աստուածն (կամ աստուածային) բանի», այսինքն՝ քրիստոնեական հայկական թվականի երկրորդ տարբերակն է: Բնագրի մեջ թվականը գրվել է ՌԵԻԲԺ, որը տարակարծության

տեղիք է տվել: Ա.Մանուչարյանը կարծել է, որ այդ թիվը պետք է խաղալ ՌՒ եւ ՐԺ և ընկալել է կա՛մ 1000+20=1020թ., կա՛մ 1002+20=1022թ., կա՛մ 1000+2+12=1014թ.[36]: Հարկ է նշել, որ ԲԺ-ն երբեք չի հանդիպել: Այն գրության հին ձև է և պետք է ընկալել "երկոտասան», այսինքն՝ 12:

Արձանագրության մեջ տասն անգամ օգտագործվել է Բ տառը: Միայն վերոհիշյալ դեպքում, այն է՝ թվացյալ կցագրի ժամանակ, գլխի եզրի վրա, ձախ հորիզոնական գծի վերջում ունի խորացված մաս: Ի դեպ, բացառում պատահող ր և Թ տառերի ձախ հորիզոնական գծի վրա նույնպես բացակայում է խորացված մասը: Հետաքրքիր է, որ Ե տառի բոլոր վերջավորությունները խորացված են: Մեր կարծիքով, այն կցագիր չէ: Այդ տառը պետք է կարդալ միայն Ե: Գրիչը պարզապես սխալ է թույլ տվել, նախապես գրել է ՌԲԺ, սակայն սխալը նկատել է և ուղղել՝ գրելով ՌԵւ ԲԺ, այսինքն՝ 1012: Բնագրում տեղ է գտել քրիստոնեական հայկական 1012 թվականը: Հարկ է նշել, որ հայ մատենագրության մեջ առկա է քրիստոնեական հայկական թվականի երեք տարբերակ: Ուսումնասիրողներին դյուրին չէ եղել կողմնորոշվել և ճիշտ ընկալել այդ համաժամանակյա տարեթիվը: Ասենք միայն, որ օգտագործելով քրիստոնեական հայկական թվականի երրորդ տարբերակը, նրանք գտել են ներկա թվականը, այն է՝ 1012-ից հանել են երկու տարի և ստացել 1010 թվական: Ի դեպ, քրիստոնեական հայկական թվականի վերոհիշյալ տարբերակը դեռևս չէր ստեղծվել, հետևաբար հիշյալ մեկնությունը ընդունելի չէ: Ուսումնասիրողների կողմից արծարծված քրիստոնեական հայկական թվականի երրորդ տարբերակը ստեղծել է Գեորգ Մեղրիկը, ինչպես նշել է Սամվել Անեցին[37], և հայկական սկզբնաղբյուրում այն առաջին անգամ օգտագործվել է XIIդ. սկզբներին՝ Հովհաննես Սարկավագի կողմից: Այն օգտագործել է նաև Սամվել Անեցին:

Արարչության Շ-եակ թվականի վերլուծությունից պարզ է դառնում, որ բնագրում վկայված է քրիստոնեական հայկական թվականի այն տարբերակը, որը երեք տարով ավելին է, քան քրիստոնեական դիոնիսյանը: Հովհաննես Սարկավագը վկայում է[38], որ Քրիստոսի ծննդից մինչև Հայոց մեծ թվականը 553 տարի է, իսկ ոմանք հաշվել են 556 տարի, այսինքն, երեք տարի ավել: Նա նկատի է ունեցել քրիստոնեական հայկական թվականի 3-րդ և 2-րդ տարբերակները: Վերջին թիվը՝ 556-ը, Սարկավագը սխալ է համարում, սակայն, ինչպես երևում է հայերեն վիմագիր և գրչագիր հիշատակարաններից, այդ թիվը գումարելով Հայոց մեծ թվականին՝ ստացել են քրիստոնեական հայկական թվականի երկրորդ տարբերակը: Ընդ որում, ոչ միայն մինչև Սարկավագը, այլև՝ հետագայում:

Բերենք քրիստոնեական հայկական թվականի 2-րդ տարբերակի վկայություններից մի քանիսը[39]:

Վերոհիշյալ վկայությունների թվականները կունենան հետևյալ տեսքը.

---

[36] Ա.Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 208:

[37] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 75:

[38] Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 278-79:

[39] Սբ. Գեորգ եկեղեցու արձանագրությունը, Գ.Հովսեփյան, Հիշատակարանք, հ. 1, Անթիլիաս, 1959, էջ 356, ՄՄ, ձեռ. 5736, Մ.Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1910, էջ ԺԸ և այլն:

Աղյուսակ III

Թիվ	Զուգահեռ թվականներ	Թվերից ստացված մնացորդները	19-ամյակի հմպտ. տարվա լուսնի լրումը	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լրումը
1	2	3	4	5
1.	1040 (քրիստոնեական հայկական թվական)	14(-4)	A4	A13
	485 (հայոց մեծ թվական)	10	A4	A13
	1037 (քր. դիոն. թվ.)	11(-1)	A4	A13
2.	1149 (քր. հայկ. թվ.)	9(-5)	A10	A13
	593 (հայոց մեծ թվական)	4	A10	A13
	1145 (քր. դիոն. թվ.)	5(-1)	A10	A13
3.	1276 (քր. հայկ. թվ.)	29(-5)=17	A17	A13
	720 (հայոց մեծ թվ.)	17	A17	A13
	1272 (քր. դիոն. թվ.)	18(-1)	A17	A13
4.	1293 (քր. հայկ. թվ.)	1(-4)=16	M29	A13
	739 (հայոց մեծ թվ.)	17(-1)	M29	A13
	1290 (քր. դիոն. թվ.)	17(-1)	M29	A13
5.	1297 (քր. հայկ. թվ.)	5(-4)	A13	A13
	742 (հայոց մեծ թվ.)	1	A13	A13
	1294 (քր. դիոն. թվ.)	2(-1)	A13	A13
6.	7086 (տաբրչ. Շ-եակ թվ.)	18(-1)	A7	A4
	1110 (հայոց մեծ թվ.)	8(-1)	A7	A13
	1661 (քր. դիոն. թվ.)	8(-1)	A7	A13

Բերված վկայություններից երևում է, որ քրիստոնեական հայկական թվականի 2-րդ տարբերակը ստանալու համար հայոց մեծ թվականին գումարել են 555 (2րդ և 3-րդ օրինակներում՝ 556, 4-րդ օրինակում՝ 554) : Քրիստոնեական հայկական թվականի տարբերակներից մեկի կանոնն ասում է, որ եթե հայոց մեծ թվականին գումարենք 556, կստանանք Քրիստոսի թվականը[47]:

Ակնհայտ է, որ Իմաստասերի վկայած 556 թիվը մեխանիկորեն մուծվել է քրիստոնեական հայկական թվականի տարբերակներից մեկը ստանալու թվականի կանոնի մեջ: Հովհաննես Սարկավագի ցուցումը և աղյուսակ III-ի 2-րդ և 3-րդ օրինակները թույլ են տալիս պնդել, որ կատարվել է մեկ տարվա մեխանիկական սխալ և առաջացել է քրիստոնեական հայկական թվականի 2-րդ տարբերակի մեկ այլ տարբերակ, որտեղ քրիստոնեական դիոնիսյան թվական ստանալու համար գումարվել է ոչ միայն երեք, այլև չորս տարի կամ հայոց մեծ թվականին գումարվել է ոչ միայն 555, այլև 556: Ակներևաբար քրիստոնեական հայկական թվականի 2-րդ տարբերակը առաջացել է Անիում, մանավանդ որ

[47] ՄՄ, ձեռ. № 1999, էջ 62ա-բ:

հնագույն վկայությունները գտնում ենք Անիի վիմագիր և ձեռագիր հիշատակարաններում: Համաժամանակյա տարեթվերի քննությունից երևում է, որ կաթողիկեի արձանագրության դրոշմողը՝ Բենես այն ուղղության ներկայացուցիչներից էր, որոնք Քրիստոսի ծննդից մինչև հայոց մեծ թվականի առաջին տարին հաշվել են 556-ը: Այդ ստացվում է ինչպես արարչության Շ-եակ, այնպես էլ քրիստոնեական հայկական թվականից հայոց մեծ թվականի տարին գտնելով, այս է՝ 457 (6433-5976 և 1012-555): Այսպիսով պարզ է դառնում, որ քրիստոնեական դիոնիսյան թվական ստանալու համար քրիստոնեական հայկական թվականի 2-րդ տարբերակից պետք է հանել երեք տարի (ուշ շրջանում նաև 4 տարի) կամ գտնված հայոց մեծ թվականին գումարել 552: 1012-ից հանենք 3, կստանանք 1009 թ.: Հետևաբար՝ երկրորդ համաժամանակյա տարեթիվը ևս ցույց է տալիս, որ արձանագրությունը գրվել է 1009 թվականին:

Անիի մայր տաճարի արձանագրության հաջորդ համաժամանակյա տարեթիվը հետևյալն է. «ՉԺԱ ամի հաւատալո[յ] ի Քրիստոս հայոց»: Պարզվում է, որ բնագիրը արձանագրվել է նաև հայոց քրիստոնեության դարձի 711 տարում: Հ. Օրբելին այդ թիվը վերծանել է ՉԸԺ[41], որին հետևել է Ա.Մանուչարյանը[42]: Արձանագրության մեջ այդ թիվը գրված է ՉԸԺԱ: Փորագրողը սկզբում սիալմամբ դրել է ՉԸԺԱՄԻ, սակայն հետագայում, տեսնելով իր կատարած սխալը, Մ տառի ներքևում ավելացրել է մի ստեղն՝ դարձնելով կցաղիր ԱԸ այսինքն, բնագրում կլինի ՉԸԺԱԱՄԻ: Պարզ է, որ Ը-ն արդյունք է դրչական սխալի: Այն պետք է կարդալ ՉԺԱ(711)ԱՄԻ: Վկայված քրիստոնեական հայկական թվականից հանենք վերոհիշյալ տարեթիվը, կստանանք 301 (1012-711), իսկ ստացված քրիստոնեական դիոնիսյան թվականից հանելով նույն թիվը, կստանանք 298 (1009-711):

Ուսումնասիրողներից ոմանք 711-ին գումարել են 301 և ստացել քրիստոնեական դիոնիսյան թվականը, այն է՝ 1012 և դրանից, առանց պատճառաբանելու, հանել են մեկ կամ երկու տարի: Մինչդեռ 1012 թվականը քրիստոնեական հայկական թվականի 2-րդ տարբերակն է, որը երեք տարով ավելի է, քան քրիստոնեական դիոնիսյան թվականը:

Բանն այն է, որ հայոց քրիստոնեության դարձի կամ լուսավորության, կամ Գրիգոր Լուսավորչի թվականը չի կարող հաստատել կամ հերքել երկու համաժամանակյա թվերով մեր ստացած քրիստոնեական դիոնիսյան թվականը, այն է՝ 1009-ը: Քանի որ հայոց քրիստոնեության դարձի թվականի ստույգ տարին հայտնի չէ, այն ըստ հայ մատենագրական վկայությունների տատանվում է 276-312 թվականների սահմաններում: Հայոց դարձի թվականներն են՝ 276 (Կողեռն), 301 (Ասողիկ), 304 (Սարկավագ), 305 (Սամվել Անեցի), 310, 312 և այլն[43]:

Հայկական տոմարական կանոններում[44] հայոց քրիստոնեության դարձի թվականը գտնելու համար սահմանվել է հետևյալ կանոնը. եթե վերցնենք 276-ը, 251/2-ը, 246/7-ը, 241/2-ը և գումարենք հայոց մեծ թվականը, կստանանք Գրիգոր Լուսավորչի թվականը: Պատահում է նաև, որ բնագրերում թեև կանոնը բերվել է, սակայն ստացվում է այլ, քան իրենց իսկ վկայած թվականները: Պարզ է, որ հայ միջնադարի հեղինակները ունեցել են Հայոց քրիստոնեության դարձի իրենց սեփական, առնվազն չորս խումբ կազմող, թվականները: Եթե հաշվենք

[41] Հ.Օրբելի, նշվ. աշխ., էջ 35:
[42] Ա.Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 208:
[43] ՄՄ, ձեռ. 1999, էջ 62ա-բ:
[44] Նույն տեղում:

19-ամյակի տարիներով, ապա 1-ին տարին A13-ը ընդունելու դեպքում հայոց քրիստոնեական դարձի թվականը կստացվի 287-ը կամ 306-ը: Առաջին տարին A4-ը հաշվելու դեպքում կունենանք 296 և 315 քրիստոնեական դիոնիսյան թվականները: Դրանք քրիստոնեական հայկական թվականի տարբերակներով կլինեն մեկ, երկու և երեք (չորս) տարով ավելի:

Հայերեն ձեռագիր հիշատակարանների հեղինակներից շատերը հիմնականում խուսափել են իբրև համաժամանակյա թիվ օգտագործել Գրիգոր Լուսավորչի թվականը: Սակայն առկա են փաստագրված նյութեր:

Արձանագրության երկրորդ խմբի համաժամանակյա տարեթվերով հայտնի է դառնում, որ բնագիրը գրվել է 1009 թվականին: Դիմենք հիշյալ թվականը հաստատող մատենագրական վկայություններին:

Սամվել Անեցի. «ՌԺԱ (1011) կաթողիկէն սխրատեսիլ զոր հիմնադրեաց Սմբատ յիւրում քաղաքին յԱնի, աստանօր զլիաւորեցաւ հրամանաւ և արդեամբ Կատրամիզեայ թագուհւոյ, որ էր կին Գագկա Շահանշահի՝ եղբօր Սմբատայ»[45]:

Հովհաննես Սարկավագի ժամանակագրության մեջ՝ «ՆԾԷ (457) կինն Գագկա[յ] Կատրմիտէ չինէ զկաթողիկէն յԱնի»[46]: Ինչպես հայտնի է, Սամվել Անեցին քրիստոնեական թվականները տվել է քրիստոնեական հայկական թվականի 3-րդ տարբերակով, որը երկու տարի ավելի էր քրիստոնեական դիոնիսյան թվականից: Ուստի՝ 1011-ից հանենք երկու, կստանանք 1009թ.: Սարկավագի ժամանակագրության մեջ փաստարկված հայոց մեծ թվականին, այն է՝ 457, գումարենք 552, կստանանք 1009 թվական:

Պարզվում է, որ Սամվել Անեցին և Հովհաննես Սարկավագը Անիի մայր եկեղեցու արձանագրության գրման թվականը չփոթել են տաճարի ավարտի թվականի հետ:

Անիի կաթողիկեի արձանագրության համաժամանակյա տարեթվերի քննությունը հնարավորություն է տալիս ներկայացնելու հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ IV

Զուգահեռ թվականներ	Թվերից ստացված մնացորդները	19-ամյակի համպ. տարվա լուսնի լրումը	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լրումը
1-ին խումբ			
450 (հայոց մեծ թվական)	13	A1	A13
2[22] (հռոմեական փոքր թվական)	13	A1	A13
393(հիջրայի թվական)	–	–	–
1002 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	14(-1)	A1	A13
2-րդ խումբ			
6433 (արարչության Շ-եակ թվ.)	11	A13	A4
1012 (քրիստոնեական հայկական թվական)	5(-3-1=4)	A13	A13
711 (հայոց քրիստոնեության դարձի թվական)	8(+3)	A13	A4
[457 (հայոց մեծ թվական)]	1	A13	A13
1009 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	2(-1)	A13	A13

[45] Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք..., էջ 104–105:
[46] Հովհաննես Իմաստասերի մատենագրություն, էջ 134:

Համաժամանակյա տարեթվերի և մատենագրական վկայությունների ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ Անիի մայր եկեղեցու կառուցումը Տրդատ ճարտարապետը սկսել է Սմբատ թագավորի հրամանով 990 թվականին (կամ փոքր ինչ շուտ), Արգինայի կառուցման ավարտի տարում:

Սմբատ արքայի մահից հետո (991թ. ձմռանը) կաթողիկեի շինարարությունը Գագիկ թագավորի հրամանով և Կաղրամիդե թագուհու և Սարգիս կաթողիկոսի բանակցությունները բերել են այն բանին, որ վերջինս հրամայել է մայր տաճարի սպասավորներին՝ թագուհու մահից հետո Վարդավառին շարունակաբար պատարագ տալ՝ մինչև Քրիստոսի գալուստը: Կաթողիկոսի հրամանով Անիի մայր տաճարի կառուցումն ավարտելու առիթով գրված հրովարտակը 1009 թվականին արձանագրվել է կառույցի հարավային ճակատի արևմտյան մասում:

СИНХРОННЫЕ ДАТЫ НАДПИСИ АНИЙСКОГО КАФЕДРАЛЬНОГО СОБОРА

Р.О. ВАРДАНЯН

Резюме

Анализ синхронных дат надписи Анийского кафедрального собора, а также изучение письменных источников показывает, что строительство Анийского кафедрального собора архитектор Трдат начал по указу царя Смбата в 990 году (или чуть ранее – в 989г.), в год завершения строительства церкви в Аргине. После смерти царя Смбата, зимой 991г., строительство кафедрального собора Ани было продолжено по указу царя Гагика и его супруги царицы Катрамиде, на ее средства. Оно было завершено в 1002 году. В результате переговоров между царицей Катрамиде и католикосом Саргисом последним был дан указ служителям Анийского кафедрального собора каждый год после смерти царицы в праздник Вардавар служить обедню (патарак) по ней.

Этот указ был высечен в западной части южной стены храма в 1009 году, где также указана дата завершения строительства кафедрального собора (1002г.).